

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 25

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

12.10. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Ն. Ասրյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերդյանը, Ա. Աղլոյանը, Վ. Դոխոյանը, Ս. Խեչումյանը, Հ. Մկրտչյանը, Գ. Բաղդասարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ

Օր ա կ ա ր գ ու մ`

1.ա/Հոկտեմբերի 2-ին մարզում կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքների մասին

բ/ Համայնքների կառավարման տեղեկատվական համակարգերի շահագործման մշտադիտարկման արդյունքների մասին
/Ձեկ.Դ.Մանուչարյան/

2. Հայ – ռուսական միջտարածաշրջանային 5-րդ համաժողովի ծրագրի մասին
/Ձեկ.Տ.Բաղդյան/

3.,,Դիակոնիա,,հիմնադրամի կողմից մարզում կատարված ծրագրերի մասին
/Ձեկ.Ն.Սարգսյան/

4.ա/ Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման մասին
բ/ համայնքներում բյուջեների կազմման գործընթացի մասին
/Ձեկ.Հ.Պապոյան/

5.Ֆերմերներին աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուների բաշխման մասին
/Ձեկ.Գ.Հակոբյան/

6.ա/2017-2025թ.թ. տարածաշրջանային զարգացման ռազմավարությունների մշակման գործընթացներում մարզպետարանների աշխատակազմերի պարտականությունների մասին

բ/ համայնքների 5-ամյա զարգացման ծրագրերի մասին
/Ձեկ.Հ.Մկրտչյան/

7.ա/,,Լոռիջրմուղկոյուղի,, և ,,Հայջրմուղկոյուղի,, ՓԲԸ-ներին համայնքային գույք հանձնելու նվիրատվության պայմանագրերի կնքման աշխատանքների մասին

բ/Լոռու մարզում գործող ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության ՊՈԱԿ-ների շենք-շինությունները ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելու վերաբերյալ

/Ջեկ.Ա.Օհանյան/

8.Ներքին կարգապահության մասին

9.. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Տ. Բադոյանին, Հ. Թադևոսյանին , մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման, համայնքների բյուջեների կազմման և համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի կազմմանը օժանդակելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Տ. Բադոյանին, Հ. Թադևոսյանին, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին`

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից պարարտանյութի և սերմացուի դիմաց գանձվող գումարները սահմանված ժամկետներում հավաքագրելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա. Սահակյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների ավագանու կողմից ընդունվող որոշումների օրինականության ապահովման նկատմամբ, որպեսզի հնարավորինս բացառվեն ֆինանսական և այլ բնույթի օրենսդրական խախտումները:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա.Լամբարյանին, մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին`

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել մարզային ենթակայության կազմակերպությունների և համայնքների կողմից պետությանը նվիրաբերվող գույքը հանձնելու աշխատանքները մինչև տարեվերջ ավարտելու ուղղությամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին`

Այսուհետ ՀՀ Կառավարության քննարկմանը ներկայացվող հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները ներկայացնել անհրաժեշտ և պարտադիր հիմնավորումներով :

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝ ա/ Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել նորընտիր և հին համայնքների ղեկավարների հետ ընդունման-հանձնման աշխատանքները օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու նպատակով:

բ/ Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել մարզի համայնքների կողմից ՀԿՏՀ-ի շահագործման արդյունավետության բարձրացման նպատակով:

/Ժամկետ՝ մինչև 30.12.2016թ./

7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

Շահագրգիռ կազմակերպությունների և ստորաբաժանումների հետ համագործակցել և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել 2017-2025թ.թ. տարածաշրջանային զարգացման ռազմավարությունների մշակման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու նպատակով:

/Ժամկետ՝ մինչև 31.03.2017թ./

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ա.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/